ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզի Հաղթանակ գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար.

1. Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախումբ.

1.1 Հաղթանակի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-2)

Առաջատար մասնագետն իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված հետևյալ գործառույթները՝

• Ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը,լրացնում է համապատասխան փաստաթղթեր,հետևում է քարտուղարի հանձնարարականների ժամանակին և պատշաճ որակով կատարմանը, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին,

• Քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին,

• Առաջատար մասնագետն ունի օրենքով,իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ համաձայն իր պաշտոնի անձնագրի:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

• Միջնակարգ կրթություն,

• Սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի „բ„ ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

• համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

• Առնվազն միջնակարգ կրթություն,

• «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

• համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ (ՀՀ Տավուշի մարզ, գ. Հաղթանակ, 1-ին փողոց թիվ 20/1) կամ Տավուշի մարզպետարան (ք. Իջևան, Սահմանադրության 1, հեռ. 0263-3-16-97) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

• գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմողը).

• համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ների/, վկայականի/ների/, աշխատանքային գրքույկի /վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից/ պատճենները՝ բնօրինակի հետ միասին,

• հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը համայնքային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը,

• հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

• հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին,

• արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

• մեկ լուսանկար՝ 3 X 4 սմ չափսի,

• անձնագրի պատճենը,

ՀՀ Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից մինչև ժամը16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև համայնքային ծառայության թափուր պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Հաղթանակի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը տեղի կունենա 2013 թվականի հունիսի 26-ին, ժամը 12:00-ին, **Հաղթանակի գյուղապետարանի վարչական շենքում:**

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է ս.թ. հունիսի 11-ին,ժամը 18:00 :